

«Շտապագին կը փախչի, իր մէջ նոր կատարուած հրաշքներու հայեցողութեանը մէջ առանձնանալու, երթալ բոլորանուէր աղօթելու համար: «Քահանայ է!»»

Սյստեղ կ'աւարտի գրքին առաջին մասը:

ՏԻԳՐԱՆ

HAUPTMANN.—DER ARME HEINRICH.

Հառուպուման.—Խեղճ Հայնրիխը, դրամա.

Գերմանական մի լեզուագետ է Հառուպումանի այդ նոր գրամայի հիմքը կազմում: Կոմս Հայնրիխ Փօն-Աուէն, ասում է այդ լեզուագետն, բորոտութիւն ստացաւ: Նա տանջուած էր զիչեր-ցերեկ թշուառութեան գրկում նա մոռացել էր իր մեծութիւնն ու իշխանութիւնը և թափառում էր սարերում ու անտառներում: Վերջապէս հասնում է փրկութեան ժամը: Հարեան կայուածատիրոջ աղջիկը լսում է, թէ Սայերնուում ապրում է մի բժիշկ, որը կարող է բժշկել բորոտութիւնը կուսական արիւնով: Նա որոշում է զոհել իր կեանքը կոմսի թշուառութեանը վերջ դնելու համար: Բժշկուում է կոմսը, բայց առանց արիւնի: Սյն ժամանակ, երբ անձնագոհ աղջիկը պառկած է անդամահատական սեղանի վրայ և սպասում է իր կեանքի վերջին, յանկարծակի ներս է մտնում կոմսը, որպէսզի խանգարէ այդ կամաւոր ոճրազորութիւնը: Հէնց այդ բոպէին նա զգում է, որ հիւանդութիւնը մի աստուածային պատիժ է իր անուղղելի գոռոզութեան, իր հակաիրօնական գործերի ու հաւատալիքների համար: Զգում է և հոգեկան թեթևութիւն ստանում: Զղջումը փրկում է նրան: Կարճ ժամանակից յետոյ նա բոլորովին առողջանում է և ամուսնանում է փրկիչ-աղջկայ հետ:

Այդ ֆանտաստիկ աւանդութիւնից զեռ XII-րորդ դարում բանաստեղծ Հարաման Փօն-Աուէն ստեղծել է մի գեղեցիկ պոէմա՝ «Der arme Heinrich» անունով: Իսկ այժմ նոյն նիւթը հիմք է դարձել Հառուպումանի նոր գրամայի համար: Սակայն չնորձալի հեղինակը քիչ ձեւափոխել է այդ լեզուագետն և նրա վերայ որոշմել է իր տաղանդին յատուկ գրաւչութիւնն ու զեղաբուեատական նրբութիւնը: Ահա գրամայի սիւժետը.

—Կոմս Հայնրիխը յանկարծ դալիս է կալուածատէր Գոտֆրիդի մօտ և ցանկութիւն է յայտնում այդտեղ երկար ապրելու: Անհանդստանում են Գոտֆրիդն ու նրա կինը, տեսնելով

կոմսի այլայլուած դէմքը, հիւանդոտ արտայայտութիւնը: Նրանց տարօրինակ ու անհասկանալի է թւում, որ կոմսը թողնում է պալատական փայլուն ու փարթամ կեանքը և գերադասում է անտառների խաղաղութիւնն ու մենակութիւնը: Անցնում են օրեր, և այդ անհանգստութիւնն աւելի ու աւելի սաստկանում է, որովհետև Հայնրիխը շարունակ խոյս է տալիս մարդկանցից, թափառում է մենակ, տխուր ու մաայլ: Նա միայն Գոտֆրիդի փոքրիկ աղջկայ—Օտտոգերէի հետ է քաղցր խօսում, խաղում ու հանաքներ անում:

Մի տարօրինակ տիպ է Օտտոգերէն: Նա իր վարք ու բարքով, իր կրօնական ջերմեռանդութեամբ յիշեցնում է Հաուպտմանի մի ուրիշ հերոսուհուն—Հաննելէին («Hannele»—գրամա): Նոյն խորհրդաւոր հաւատը, նոյն ծայրայեղ ջերմեռանդութիւնը:

Կոմսի փաղաքշանքները կամաց-կամաց զարթեցնում են Օտտոգերէի կանացի զգացմունքներն ու հակումները: Նա աշխատում է դուր գալ, գեղեցիկ երևալ: Նա տեսնում է, որ կոմսը թշուառ է, լսում է, որ մի սարսափելի հիւանդութիւն հալ ու մաշ է անում նրան, և այդ բոլորից յետոյ շարունակ մտածում է նրա փրկութեան մասին: Նա լսում է, որ Սիցիլիայում ապրում է մի բժիշկ, որը բժշկում է բորոտներին՝ անմեղ կոյսի արիւն քսելով նրանց վրայ: Այդ լուրը աւելի զարկ է տալիս Օտտոգերէի մտատանջութեանը: Նա մաշում է օրէցօր. նա դառանցում է այդ մասին թէ քուն և թէ արթուն ժամանակ: Անհանգստանում են ծնողները՝ իրանց զաւակի այդպիսի տարօրինակութիւնը տեսնելով: Վերջապէս մայրը զիմում է Բենեդիկտ քահանային և հարցնում է նրա խորհուրդը:

—Օտտոգերէն Քրիստոսի հարմանցուն է դառնալու, պատասխանում է քահանան, ուրեմն պէտք է հաշտուել այդ մտքի հետ...

Լսում են ծնողները և անհամբեր սպասում գալիք դէպքերին: Իսկ կոմսը օրէցօր աւելի վատանում է, աւելի մոռալուում ու տանջուում: Նոյնիսկ ամենամօտիկ, ամենահաւատարիմ ծառաները զղուում են նրանից, հեռու են փախչում: Ամբողջ կառավարիչը՝ Հարտման Փօն—Սուէն գալիս է համոզելու, որ կոմսը նորից իր բնակավայրը—ամբողջ վերադառնայ, նորից սկսէ իր առաջուայ կենցաղը, բայց ի դուր: Կոմսը մնում է անզրբոտելի: Նա հպարտութեամբ մերժում է այդ առաջարկը, յիշում է իր անաջողութիւնների, իր հիւանդութեան մասին, յայտնում է, որ սկզբում շատ մեծ հաւատ է ընծայել իր հղօրութեանը, ուստի և այժմ պէտք է կրէ զրա պատիժը: Նա

պէտք է տեսնի, թէ ինչպէս բոլորը սարսափով ու զգուանքով փախչում են նրանից: Այժմ բոլորը դիտեն, որ կոմս Հայնրիխը «խեղճ, աղքատ Հայնրիխ» է դարձել, և նա ատում է այդ «բոլորին» էլ, հեռանում է նրանցից, որպէսզի անապատում մենակ ապրի: Ահա այդպիսի դառնութեամբ է խօսում Հայնրիխը և յուսահատութիւնից թուլանում, գեախն է ընկնում: Իսկ այդ բոպէին Օտտոգերէն փրկարար հրեշտակի նման մօտենում է նրան և քնքուշիկ ձայնով մրմնջում.

—Մի յուսահատուիր, ես կոչուած եմ քեզ փրկելու...

Անցնում են օրեր, շաբաթներ: «Խեղճ Հայնրիխը» անտառումն է, իր գերեզմանն է փորում: Նրա մօտ է դալիս ծառան, որպէսզի իմանայ, թէ նա ինչպէս է ապրում, բայց «բորոտ Հայնրիխը» հեռացնում է նրան, սպառնալով, թէ կը մօտենայ, կը քսուի նրա մարմին: Գալիս է քահանան և նրա համար հաց ու ջուր բերում, բայց Հայնրիխը նրան էլ անպատում ու յանդիմանում է հպարտութեամբ: Այժմ, նա թշուառութեան ու մենակութեան մէջ էլ հպարտ է, ատում է, որ յօժարակամ է ընտրել իր այդ վիճակը, որ նրան զգուելի էր դարձել փարթամ կեանքը, բարեկամների ու ծառաների հլու հնազանգութիւնը, որ առաջ զուրկ էր ազատութիւնից, իսկ այժմ և ազատ է, և իշխող: Նա ձգտում էր դէպի այդ ազատութիւնը և այժմ հասել է իր նպատակին: Երբ մի օրն է ստրուկ ուզում է ազատութիւն ձեռք բերել, պէտք է ձգտի դէպի վերև, իսկ երբ ընդհակառակը մի իշխան, մի տէր է դիմում դէպի ազատութիւն, նա պէտք է իջնի իր բարձրութիւնից, պէտք է խոնարհուի: Ահա հէնց այդ պատճառով էլ նա ապրում է անապատում, փորձում է իր գերեզմանը:

Բենեդիկտը և Գոտֆրիդը գալիս են «խեղճ Հայնրիխի» մօտ, համոզում են, որ նա վերագառնայ տուն՝ Օտտոգերէի մօտ և իր ազդեցութիւնը գործ դնէ, որպէսզի խելագարութեան հասած աղջիկը հանգստանայ, բայց ապարդիւն:

Հայնրիխը յայանում է, որ Օտտոգերէն եկել էր իր մօտ—անտառ և առաջարկել էր ընդունել իր գոհաբերութիւնը՝ կուսական արիւնը—բորոտութիւնից ազատուելու համար, բայց մերժում էր ստացել, որովհետև կոմսը չի ուզում մի երեխայի ձեռքով փրկութիւն ստանալ: Նա պատրաստ է մենակ տանջուել ու մեռնել...

Վշտացած հեռանում են Բենեդիկտը և Գոտֆրիդը, իսկ Հայնրիխը մենակ մնալով՝ բացականջում է.

«Ամբողջ աշխարհը, հերոսութիւն, փառք—ամենինչ թառամում է...

Ամեն ինչ ունայնութիւն է, բոպէական երազ, ուրուական...
Բայց միայն քիչ առաջ նա (իման Օտտոգերէն) այստեղ էր,
եւ նրա խօսքերը ինձ յոյս ու սիրտիսն էին շնչում:

Օ՛, կեանքի յաղթանակ, միթէ նորից քաշելու ես ինձ քո
յետևից...»

Եւ իսկապէս դալիս է այդ յաղթանակը Հայնրիխի համար:
Ժամանակը չի կարողանում ամուրիել Օտտոգերէի վիշտն
ու մտատանջութիւնը: Օրէցօր սաստկանում է նրա կրօնական
ջերմեռանդութիւնը: Նա թեթեւութիւն է որոնում, անտառի մա-
տուռում, չարունակ աղօթում է, լաց է լինում, չարքաշ
կեանք է վարում՝ հաւատացած լինելով, թէ գրանով կարող է
Աստու գութն հայցել և Հայնրիխի հիւանդութիւնը բուժել,
տանջանքը փարատել: Ջերմ հաւատը կարող է հրաջքներ գոր-
ծել. Օտտոգերէն մտնում է այդ շրջանը. նա մի հորհրդաւոր
տեսիլ է տեսնում:—Ահեղ փոթորիկ է, չը կայ փրկութիւն,
սուր դանակը ցցուած է նրա կրծքի մէջ, և չարախնդաց դեերը
տանում են նրա մերկ դիակը, տանում են դէպի անդունդ, դէպի
կորուստ: Բայց ահա երկնքում բարձրանում են երկու փայլուն
արեգակ, նրանց յոյսը հետու է վանում թանձր խաւարը, ան-
հետացնում է դժոխային պատկերները... Եւ նա զարթնում է
ուրախացած ու ոգևորուած...

Նա այդ տեսիլը պատմում է քահանային և յայտնում է,
որ այժմ աւելի քան հաւատացած է, որ պիտի յաղթանակէ,
պիտի փրկէ «խեղճ Հայնրիխին»: Եւ այդպիսի պինդ հաւատով
սպասում է Հայնրիխի գալուստ: Նրա սպասելիքն արդարանում
է: Հպարտ կոմսը յուսահատութեան զազաթնակէտին հասած՝
թողնում է անտառը և սկսում է որոնել Օտտոգերէին, որից ա-
ռաջ խուսափում էր:

Երկար որոնումներից յետոյ նա գալիս է վերջապէս մա-
տուռը: Այստեղ զղջացող սրտի աղօթք չին մրմնջում նրա չըր-
թունքները, այլ անէձք ու նղովք: Նրա լեզուն դուրս է թա-
փում սրտում հաւաքուած ամբողջ դառնութիւնը, նա բողբ է
կարգում առ Աստուած, բողբ դէպի կեանքը, դէպի մարդիկ:
Քահանան աշխատում է մխիթարել, հանգստացնել նրան և
յայտնում է, թէ Օտտոգերէն արդէն թողել է ունայն աշխարհը:
Այդ պատասխանը աւելի յուսահատեցնում է Հայնրիխին: Նա
կարծում է, թէ Օտտոգերէն մեռել է: Բայց վերջինս յայտնը-
ւում է հէնց այդ բոպէին և ընկճուածի սրտում վառում յուսոյ
կայծը: Նա տանում է իր յետևից Հայնրիխին, տանում է՝ փըր-
կութիւն ու երջանկութիւն տալու...

Դրամայի վերջին գործողութիւնը ամբողջումն է կատար-

ւում: Այդտեղ է կոմսը, բայց արդէն առողջ ու երջանիկ: Հաւաքուել են նրա հաւատարիմ ծառաներն ու բարեկամները: Պատրաստութիւն են տեսնում պսակադրութեան համար: Պսակուելու է Հայնրիխը իր փրկարարի՝ Օտտոգերէի հետ: Նա հրճուանքով պատմում է այդ փրկութեան մասին: Նրան բժշկել էր ոչ թէ կուսական արիւնը, այլ մաքուր ու անարատ սէրը: «Փրկութեան առաջին լոյսը փայլեց իմ առաջ, պատմում է նա, երբ անտափ մատուռում տեսայ Օտտոգերէին: Նրա տեսքը ջնջեց իմ սրտից բունն զառնութիւնն ու ատելութիւնը դէպի մարդիկ: Ես մի ջերմ տենչանք զգացի դէպի կեանքը, ուղեցի նորից աշխարհ մտնել, թէկուզ դրա համար հարկաւոր լինէր մի անմեղ օրիորդի արիւն թափել: Երկրորդ անգամ փայլեց այդ լոյսը, երբ Օտտոգերէի հետ ճանապարհ ընկայ դէպի Սիցիլիա և սիրեցի նրան ամենաջերմ սիրով: Այդ սէրը մեռցրեց իմ գոռոզութիւնը և նրա տեղ դրեց մի նոր զգացմունք—անձնագոհութիւն մի ուրիշ էակի համար: Ես համոզում էի Օտտոգերէին, որ նա ձեռք վերցնէ իր մտադրութիւնից, խնայէ իր մատաղ կեանքը, բայց իզուր: Նրա որոշումն հաստատ էր, հաւատն անդրդուելի: Հասանք վերջապէս Սիցիլիայի Սալերնո քաղաքը: Բժիշկը զարմացաւ Օտտոգերէի պատրաստակամ անձնագոհութիւնը տեսնելով, աշխատեց վճիխցնել նրան, որպէսզի դրանով փրկէ, բայց Օտտոգերէն մնաց անդրդուելի: Ահա վերջապէս հասաւ վճռական րոպէն: Բժիշկը տարաւ Օտտոգերէին անդամահատելու... Բայց հէնց այդ րոպէին իմ առաջ փայլեց փրկարար լոյսի երրորդ ճառագայթը: Ես կտորեցի դուռը, ներս մտայ և արգելեցի ոճիրը: Փրկուած էր Օտտոգերէն. փրկուած էր և՛ ես: Այդ րոպէին կարծես մի նոր ոյժ անցաւ իմ մէջ: Ես բժշկուած էի...»

Իրան անսահման երջանիկ է զգում Հայնրիխը: Բայց կատարուած իրողութիւնը դեռ պարզ չէ Օտտոգերէի համար: Նա իրան մեղաւոր է զգում, որ չէ կարողացել մինչև վերջն իրազործել իր որոշումը: Նրան թւում է, թէ Աստուած զայրացել է նրա վրայ և յանձնել դժոխային ոյժերին: Այդ դառը մաքերը թմրեցնում են նրան, նա քնում է: Այդ ժամանակ կոմսը նրա շուրջն է հաւաքում իր ասպետներին ու բարեկամներին: Բերում են երկու թագ և դնում՝ մէկը Հայնրիխի գլխին, իսկ միւսը—Օտտոգերէի: Այդ րոպէին զարթնում է Օտտոգերէն և մի աստուածային պարզ և համարում կատարուած իրողութիւնը: Նա արդէն փոխուած է. դառը մաքերը այլևս չեն տանջում նրան, իսկ Հայնրիխը պատմում է, թէ ինչպիսի անսահման երջանկութիւն է սպասում նրանց, թէ նա այսուհետև կարող է

իր երկրի իսկական տէրն ու իշխանը լինել առանց դառնութեան ու գոռոզութեան, որովհետեւ արդէն մինչև յատակը դատարկել է դառնութեան բաժակը, ճաշակել է հեղութեան քաղցրութիւնն ու սիրոյ երջանկութիւնը...

Դրանով վերջանում է դրաման: Այդպիսով Հաուպտմանը կարողացել է հասարակ լեզենդայից մի շնորհալի երկ ստեղծել՝ լի է ֆիֆեկաներով ու ցնցող տեսարաններով, համակուած հումանիտար մի լայն գաղափարով: Սէրը, մարդասիրութիւնը փրկարար ոյժ ունի, առանց նրան չը կայ երջանկութիւն, առանց սիրոյ կեանքը դառնութեան, յուսահատութեան ու վրդովմունքի անծայր շղթայ է—անա այդ գաղափարը:

Ե. Թ.